

Գեո. Նորերում, մանաւանդ վերջին պատերազմից առաջ, թիւրքիայի ներքին դրութիւնը անյուշալի էր համարուում։ Ասում էին, որ թիւրքիան քայքայուում է, որ նրա օրերը համարված են, և որ Եւրոպայի համար հասաւ ամենայարմար րօպէն հիւանդ մարդու ժառանգութիւնը բաժան բաժան անելու համար։ Յաջորդող անցքերը բոլորովին չարդարացրին այդ շտապով արած ենթադրութիւնները։ Թիւրքիան բարեկազմ կերպով իր գոյութիւնը շարունակում է։ Նրա ներկայութիւնը ոչ միայն Ասիայում և Աֆրիկայում, այլ մինչև անգամ և Եւրոպայում ամեն օր զանազան դէպքերում աչքի է ընկնում մեծ պետութիւնների մեծամասնութեանը, որոնց շահերը երբեմն այս և երբեմն այն տեղ շփուում են սուլթանի հպատակ և իսլամը դաւանող ցեղերի և ժողովրդների շահերի հետ։

Թիւրքաց կայսերութիւնը ներկայացնում է զանազան ժողովրդների գոյնգոյն և աններդաշնակ զանգուած, և սխալ կը լինէր երեւակայել, որ այդ բոլոր ազգերը անընդունակ են քաղաքական կեանքին և մէկ որոշ կուռուրական զարգացմանը։ Յայնքը, հայերը, արաբները, անկասկած ունեն կենդանի, քաղաքական կեանքին ընդունակ ժողովրդներն բոլոր յատկութիւնները։ Նրանք, ինչպէս և թիւրքաց կայսրութեան այլ ազգաբնակիչները, գտնվելով թիւրքաց իշխանութեան տակ, ի հարկէ, հեռու չը գնացին իրանց զարգացման մէջ և իրանք իրանց հազիւ թէ ընդունակ լինէին նորոգել իրանց պետութեան կեանքը։ Բայց յայտնուում է, որ այդ դէպքում նրանք մենակ չը մնացին։ Նրանց օգնութեան հասաւ մէկ ամենազօրեղ դաշնակից, դա է եւրօպական քաղաքացիութիւնը։ Մենք գրանով չենք կամենում ասել, թէ այդ քաղաքակրթութիւնը արդէն մտցրած է թիւրքիայի սահմաններում և որ ներկայ ժամանակում թիւրքիայի ազգաբնակիչները կարելի է ճանաչել որպէս քաղաքակրթութեան բարեքները վայելող մի ժողովուրդ։ Ամենին։ Թիւրքաց ազգաբնակիչները դեռ բաւական ինքնուրույն է, նա դեռ բաւական կասկածով է վերաբերվում փոստի Արեւմտեան եկող օտար ազգային, օտարերկրային ամեն բանին։ Նա դեռ ևս զիտաւորութիւն չունի հրաժարվել այդ ինքնայնութիւնից և շատ դեպքերում դեռ էլ արգելում է իր փաղիշահի դործողութիւնների ազատութիւնը, որ յաճախ հակում է ցոյց տալի ենթարկվել իր որ և է ինչքով միմիայն, կամ առաւել ևս որ և է մեծ պետութեան խելք ներկայացուցչի ազդեցութեանը։

Բայց թիւրքիան մեծ թշուառութիւններ կրցի, և այդ թշուառութիւնները նրան օգուտ տուեցին։ Մերձեւեղի սպանութիւնը և դրան հետևող թաղաքական դաշի վրա նոր բարձրացած Մուրադի դահլիճեցութիւնը բացարեցին այժմեան սուլթանի աչքերը և համոզեցին նրան, որ կոյր հաւատի ընծայումն իր հարեմին և իր պալատականներին կարող է անսպասելի չարքներ առաջ բերել։ Մշակական վերջին շարժումն, որը վերջացաւ թիւրքիայի համար աղետալի պատերազմով և բոլորական ամենահարուստ ցամաքի կորուստով, նոյնպէս և Բոսնիան և Հերցեգովինան Աւստրիայի վարչութեանը յանձնելով, ստիպեցին սուլթանին և նրա խորհրդատուներին հասկանալ, որ ժողովրդական մասսաների արամադրութեան և պահանջներին հարկաւոր է բաւականութիւն տալ, որ ոչ մի տեսակ զօրք, մանաւանդ ոստի-

կանութիւնը և ժանդարմերի չեն կարող ճնշել համակամ ժողովրդական ապստամբութիւնը, ինչպէս օրինակ, Բոսնիացիների և հերցեգովինացիների ապստամբութիւնը, և որ, վերջապէս, բացի սուլթանի, թէպէտ և անսահման, իշխանութիւնից, կայ և եւրօպական քաղաքակրթութեան պետութիւնների օգուտ, որոնք ընդունակ են բռնել արդար-ների կողմը և բաւական զօրեղ են իրանց ձայնը յարգել տալու համար։

Մինչև վերջին պատերազմը եւրօպական պետութիւնների, գլխաւորապէս Անգլիայի և Ֆրանսիայի, հովանաւորութիւնը սահմանափակում էր դիպլոմատական պաշտպանութիւնով և յօգուտ թիւրքիայի պատերազմական միջնորդութեամբ։ Վերջին ժամանակում, այսինքն 1876 թ. սրբանախան շարժման ժամանակից, ոչ մէկը պատահեց և ոչ միւսը։ Ընդհակառակն, հարաւային սլավոնների արդարացի ձգտումները դիպլոմատական պաշտպանութիւն գտան Անգլիան չէի յայտագրի մէջ, Բերլինի արձանագրութեան և Վ. Պալմի դեպի պատերազմում։ Բոլոր թիւրքաց պատերազմի ժամանակ բոլոր պետութիւնները, առանց բացառութեան, անպայման չէզոքութիւն պահեցին, թողնելով թիւրքիային ճակատագրի կամքին։

Բերլինի վեհաժողովը, որ շատ պակասեցրեց Բոսնիայի յաղթութիւնների պտուղները և այն հեռանկարները, որ ստացվեցան բոլորների ազատութեամբ, դեպի թիւրքիան շատ քիչ բարեացակամութիւն ցոյց տուեց։ Այդ ապացուցվում է նրանով, որ շատ հարցերում թիւրքաց ինքնազօրները բողոքում էին Եւրօպայի առաջարկութիւնների դէմ և մինչև անգամ երբեմն, օրինակ, Բոսնիայի և Հերցեգովինայի ինքնի ժամանակ, հրաժարվում էին արձանագրութիւնը ստորագրելուց։

Բերլինի դաշնագրից յետոյ թիւրքիայի համար նոր տարեթիւ սկսվեցաւ։ Եւրօպական իր պարտաւէրների ապահովութեան պարտաւորութիւնը ստիպեց Բ. Գրանը կանոնաւոր կոնտրօլին ենթարկվել, որը, անկասկած, թիւրքիայում էլ այն բարեկազմ հեռանկարները կունենայ, ինչ որ անգլո-ֆրանսիական կոնտրօլը ունեցաւ Եգիպտոսում, այսինքն պարտքերի աստիճանաբար հանգչումն և երկրի ֆինանսների լաւանալը։ Վերջին պատերազմի անաջողութիւնը ստիպեց Բ. Գրանը վիճակներ անել Չէրնո-գորիային և Յունաստանին այնպիսի մի ժամանակ, երբ, ի հարկէ, եւրօպական պետութիւնները ոչ մէկը, ի բաց չառնելով և Բոսնիայում, չէր մերկացնի իր սուրը Յունաստանին և Չէրնոգորիային գիծած երկրների սահմանները որոշելու համար։

Բայց թիւրքաց կառավարութիւնը դրանով չը վերջացրեց իր գործունէութիւնը, քանի հակառակով, որ իր ստացած վերջին հարուածը իսկապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ քաղաքակրթութեան և եւրօպականութեան յաղթութիւնը խաւարածութեան ղեկով, թիւրքիան վճռեց դաշն կապել եւրօպական քաղաքակրթութեան հետ, եւրօպական կուլտուրական ոյժերի հետ։ Այդ խնդրում գերմանիան առաջարկեց իր ծառայութիւնները։ Այդ բանի հորհրդէ, Գուլը իրան ազատ է զոգում նախկին անգլո-ֆրանսիական հովանաւորութեան շնորհով։ Թիւրքիան կերպարանաւորվում է վերանորոգվում է, այդ բանում նրան շատ օգնում են արեւմտա-եւրօպական մարդիկ և դրամագիրները։ Թիւրքաց կառավարութիւնը, երկի, համոզվեցաւ, որ մենակ մահմետական կրօնական ֆանատիկներին, կամ հին-թիւրքաց բարբերին և հասկա-

ցողութիւններին կուսակից լինելով, և նոյնպէս մէկ տեսակ անմիա կասկած տանելով դէպի օտարերկրեայ ամեն բանը, թէկուզ և օտար քաղաքակրթութիւնը և միայն իր հայրենի թիւրքաց վայրենութիւնը դերադասելով, բան չի դառնայ, բայց մանաւանդ չէ կարելի այդ քաղաքակրթութեան հոսանքի դէմ դնել։

Ով չէ բարեկամանում այդ քաղաքակրթութեան հետ, և չէ սեփականում նրան, նա նրա թշնամին է դառնում, իսկ ով նրա թշնամին է դառնում, քաղաքակրթութիւնը նրան վերջ ի վերջոյ յաղթում է։ Սուլթանը, այդ, երեկ, հասկացել է, և ահա կենդանութեան պատճառը մինչև անգամ այնպիսի մի հիւանդ օրգանիզմի, ինչպէս թիւրքաց կայսրութիւնն է։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 24 ապրիլի
Մեր բարեկամներն ոմանք կրնան մեզ շատ անգամ.—ինչու լուծ ենք Ամբոսիոս վարդապետի նկատմամբ։ Մենք ալ կրնանք ինչու գրել։ Մենք չենք ուզեր անօգուտ խնդիրներու վրայ գրել։ Ամբոսիոս վարդապետինը եղած լինեցած գործ է։ Եթէ դիմքն ամբողջութեամբ համար է, նա ամենալուր բարի սովորութիւնը չունի։ Մենք մեր պարտականութիւնը ժամանակին կատարած ենք։—Ոմանք «Մշակի» ըմբռնողներին թերեւ ուշադրութիւն առնելով, այս տողերը գրողը ասելի լաւ կը սեպէ և կը խորհարարէ, սկզբունքներու, հարցերու վրայ գրել քան անձերու հետ գործ ունենալ։ Անձնականութեանը վրայ այն ատեն միայն կը խօսենք երբ հարկ անհրաժեշտ է ինչորէր լուսաբանելու համար։ Տեղն է ըսելու թէ մեր մեծ թերութիւնը կը ճանչնանք, այն է թէ վախկոտ ենք ուրիշ վրայ վատ խօսելու ատեն։ Մինչև որ լաւ համոզուած չլինանք թէ մի ու է անհատ վատ է իր ազգային գործը չըմանալին մէջ, այդ չենք գրել։ Այս համոզումն ալ դժուարաւ կրնանք ունենալ։ Միշտ ծանր պիտի ըլլայ մեր խղճին։ Եթէ անկաւ կերպով ուրիշ դատած ըլլանք։ Մեր համոզումն է թէ՛ ով որ չը գործադար ուրիշ պատուոյն վրայ նա շատ ածան կը ծախէ իր պատիւն ալ։—Այս նկատումներով է որ մեր թիւրքականութեանց մէջ անձնական յարձակում քիչ կը տեսնուի։ Բայց երբ ուրիշին վատ ըսենք, քիչ կը պատահի որ սխալինք, և չնորհալ կը լինանք անոնց որ մեր սխալը ուղղել տան մեզ։ Այսպէս գործեցինք Ամբոսիոս վարդապետի նկատմամբ։ Նրբ երեք չորս տարի առաջ շնորհաւոր ճառ սուրբը եկաւ ձեր գրասենեակ այնպիսի, մենք ընդարձակութեամբ գրեցինք թէ ինչ է այդ մարդը, ինչ են իր խաբեղանքները, ինչ ստաւը, ահա—դին, չը մարտնչու սուտեր կուղէ ձեզ կլնեցին։ Գուր նոր սկսած էիք Կ. Պոլսոյ հայոց վրա վրա տառութիւն ստանալ, չէնք կրնար ձգել որ մի խաբեղայ ամեն ինչ տակն ու վրայ ընէ (մինչև պարտալ ալ այդ հսկողութիւնն մէկը չենք կեցած, որչափ որ կրնանք)։ Բայց այդ անձը պատարար-բախան և կաթողիկոսական կրօնականներով իր ներկայանար և միթէ մեղաւորը մենք ենք որ Բոսնիոյ հայք այնքան գրական են մինչև հիմա չէ զոհն քաղաքացիական պատերազմի կը վերանան Եթեքները եւրօպականութիւնը և ինչքն այս մասին պէտք եղած անձանց հետ տեսնուեցանք և հայիւններն քովինիս պատրաստ է, կը առիթ ըլլայ կը ներկայանք։—Հիմա Ամբոսիոս հայր սուրբ ձեր ստակներն առած է, Աստուած բարի վայելում տայ ըսէք, լինանք երբնայ։

Երուսաղէմայ պատրիարքը երկու օրէն Կ. Պոլսի կը հանի, վաղեմի պարտուց ինչորէր կարգադրելու համար։ Այս անձին համար կրնան թէ գործի հակացող մարդ է. ուրեմն նա կրնայ դուրս համոզուի որ անցած են այն ատենները երբ հայրը կը կարծէին թէ Երուսաղէմի օտակ տալով արքայութիւն կերթան։ Անցելոյն հաշիւը մանրա-

մասնօրէն ներկայացնէ, ապագային համար ապահովութիւններ տայ, այն ատեն կարելի է բան մը ընել։ Բայց ամենէն առաջ վաղեմի անօգուտ կալուածներն ձեռքէ հանել։ Հող դառնող նուիրակ վարդապետներն մին կը գրէ (Միգուի) թէ վաղեմի կալուածները կարելի է ծախել, բայց այդ և այլ տեղեր ժողովուրդը թող չը տար։ Գէշ տըրապանութիւն չէ. ահա ժողովուրդը մը որ աւելի կընտրէ վաղեմի կործանումը քան կալուածները ծախելով փրկուիլ։ Նախ այդ տարօրինակ ժողովուրդը թող համոզեն։ Անցեալները «Արձագանք» մէջ հրատարակութիւն մը կար «Արեւելեան Մամուլ» և «Մշակի» թղթակցաց հետեւած ուղղութեան վերաբերմամբ Երուսաղէմայ այս հարցին նկատմամբ։—Ար ինչորէնք «Մշակի» թղթակցաց վրայ գրողներն որ առանձին առանձին գրեն թղթակցաց նկատմամբ թղթակցները շատ են, և ես ու ես համարալուովիւն չունիմ միւսներու հետ, իմ ուղղութիւնս տարբեր է։ Եթէ անարկութիւնները ինչի է, թող յայտնի ընէ որ պէտք եղած պատասխաններն ալ առնէ։—Աստի կը սպասենք։

Աստուածաշուշնի թարգմանութեան խնդրոյ վրայ ալ երկար չենք գրել։ Հոս տեղի «Փունջը» կը հրատարակէ մի թղթակցութիւն վաղաքապետն ուսկից կը տեսնուի թէ Էջմիածին տապալմէն հող տեղի, միւսն հոս տեղի աշխարհաբառով կ'ընէ այս ստույգ է, ամենէն լաւագոյնն է և ինչորէր վերջացած է։ Միայն թէ հոս շատերը այն կարծիքը կը յայտնեն թէ Հայաստանցի հայերն ալ պոլսեցուց աշխարհաբարը չեն հասկնար, և ասելի դուրաւ կը հասկնան աստաբարը իր արդի պարզ գրաբառով քան մեր աշխարհաբառով։—Չնայ ըսել թէ ինչ ընելու է։

Պէշիկթաշի գերեզմանոցի հարցը կարգադրուելու վրայ է, առանց արեւմտ գետեր հոսելու։ Սուլթանի ներքինապետ հաճի Հաֆիզը Պէշիկթաշի խափշիկը պիտի փրկէ մեր գերեզմանատունը, բարեխօսելով Սուլթանի մօտ։ Գրեթէ տարակոյս չը կայ որ մեզ Երուսաղէմի կերպով պիտի վերջնապէս այս խնդիրը։ Սուլթան մի հարց կը ծագի մեզ համար։—Անդադար կրնան «Թիւրքիոյ մէջ քրիստոնէայք իրենց կրօնական իրաւունքներն անվտանգ կը վայելին, ուստի գո՛ր ըլլաւ են այս մասին».—մենք ալ կը հարցնենք, մեր այս վիճակը մեր իրաւանց արդիւնքն է, թէ թրքաց կողմէ մեզ շնորհ մը, գոր կրնան ետ առնուլ երբ ուղեն։ Գերեզմանոցի հարցը կը ցցնէ թէ այս վերջի պարագան է։ Թիւրքիոյ ամենէն մէկ կարեւոր տարրը, թիւրքիոյ ամենէն աւելի ծառայութիւն մատուցանող մէկ ժողովուրդը, իր իրաւունքներն պաշտպանելու համար այնչափ զօրութիւն, այնչափ ազդեցութիւն չունի, որքան ունի պարծենալու ու շնորհակալ ըլլանք։ Մեր կարծեք հարկ է որ իրաց այս վիճակը փոխուի։ Գծուելու է թէ որոնք են թիւրքիոյ քրիստոնէից կրօնական իրաւունքները և Եւրօպայի հսկողութեան ներքն պէտք է դուրս անոնց պահպանութիւնը։ Եթէ մենք պարտաւոր պիտի ըլլանք մեր ամեն մէկ իրաւունքներն ամեն օր մեր արեւմտ գետով պահպանել, դա հնարաւոր է, բայց թիւրքիա պարծենալու չէ որ քրիստոնէից ազատութիւնը կատարել է։ Զուլտաններու աշխարհի մէջ իսկ դա կարելի է ընել։ Գերեզմանոցներու առթիւ սա ըսենք որ թիւրքերը մասնաւոր հակառակութիւն մը ունին մեր գերեզմանոցներու դէմ, և շատ կը սխալին անոնք որ կը կարծեն թէ այս երկրին բառգրին մէջ իրաւունք բառը գործած ըլլայ։ Օրինակ մը տանք։ Պէշիկթաշին ոչինչ հեռու է Օրթաղիցը, ստուար մեծամասնութիւնը հայաբնակ։ Օրթաղիցի գաղթութիւն է մեր գերեզմանատունը, և առաջ ալ ստորաւն է յունաց գերեզմանատունը։ Մեր գերեզմանատունն մի քանի քալ հեռու դէպի բլուրին վարը թրքաց գերեզմանոցն է։ Յունաց գերեզմանոցին բոլորովը քնակութիւն կայ, և բաւական. հրեանքը ունի իր չորհրդ բաւական տուններ, թրքաց Օրթաղիցի քնակութեան կենտրոն տեղին է և ամենէն հարուստ ու լաւ տուններն անոր չըմակալեն են. իսկ մեր գերեզմանատան բոլորովը ամենին տուն չը կայ բաւական հեռաւորութեամբ կան մի քանի տուններ։ Արդ հասարակաց առողջութիւն ըսելով վաղուց է արգելել են մեր գերեզմանոցի մէջ թաղում։ Իսկ միւսներունը թողատրած են։ Հա՛մա՛հարկ հիւանդութիւն պատահած ատեններ շատ բողոքներ եղան որ Տաճկաց գերեզմանա-

տունը թաղում չըլլայ, զի Օրթագիր քիչ տաճիկ կայ, հեռու տեղէն զինուորներ կը բերեն. բայց ոչ ոք մտիկ չըլլաւ: Մինչև հիմա մեր տեղը թաղում չըլլաւ, անոնցը կը լըլայ: Ի՞նչ կըսէք ասոր:

Պատրիարքական խնդրոյ համար առնականացող ժողովը կը գումարէ մի քանի անգամ: Բաւական հետաքրքրութեամբ կը սպասուի թէ ինչ տեղեկագիր պիտի ներկայանայ ընդհ. ժողովին: Ատեհնապետաց ժողովը կատարեալ վստահութիւն յայտնած է Ազգ. վարչութեան, և թողի՞մ մը ստորագրած են թէ Ազգ. վարչութիւնը կատարեալապէս ազգային շահուց համեմատ աշխատած է: Խորհրդարանական օրինաց համեմատ Ազգ. վարչութիւնը այսօր ո՞ր է և կատարածանայ ներքեւ չը կրնա իյնալ, որովհետեւ այսպիսի քուէ մը առած է: Սպասենք Ազգ. ժողովը գումարանա: Աստուած տար բոլոր տարածախոտութիւններն անհիմն եղած ըլլան:

Ի նպատակ երկու թերթերու անցեալ շաբթուաներկայացումը արուեստ, ի ներկայութեան Ամերիկայի դեսպանին: Բոլոր ծախքերը հողացուելէ վերջ, որ բաւական գումար մը կը լըլայ, խրաքանչիւր խմբագրին գրեթէ հարկեր չի ստանա ըստ իր կիցիայ: Այսչափի համար:

Թերթմանը-Էֆեհար կը հրատարակէ «Պատմութիւն» մի թղթակցութիւն, որոյ մէջ ամեն տեսակ յիմար և չար դրաւարութիւններ լի են «Մշակի» դէմ: Առ այժմ գրողին խրատ մը: Մանկութիւն փրկուել իր անցեալ կեղտոտութիւնները չը կրնար պահպանել. չար ոգով դուրսդուրու գէտ անդուժ չը կրնայ: Եթէ «Պատմութիւն»-էն գրեւոր հարկ կը տեսնայ, թող ապրիլ 3 ընդհ. Պատմութիւն հոս 6 կամ 7 օրէն կողքայ նամակ և ոչ թէ 20 օրէն. հայերն բաւերու ըստ ֆրանսերէն նշանակութիւններն ալ թող չը գրէ, ինչպէս իր հին սովորութիւնն էր: Կը տեսնուի՞ք:

Յառաջիկայ շաբթի կը մտնի աստի պ. Արաշամ Արաշեան: Թերթմանը-Էֆեհարի աշխատակիցներէն մին, Տիգրան Կուգայ, անտի Հայաստան երթալու: Ազգ. երեսփոխան և խմբագիր, շատ գործուն վրայ տեղեկութիւն ունի. ինքն գէշ մարդ է, և հոս սիրուած:

Սաիդ բաշա առժամանակայ կերպով պաշտօնէն քաշուցաւ: Պատերազմի ստղանաց խնդիրը չը լուծուի և դեռ երկնցնելու համար այս փոփոխութիւն հարկաւոր սեպուեցաւ: Ապաւրբանման բաշա ո՞ր է կարողութիւն ունեցող անձ է, բայց կըստ թէ Սաիդի պէս չարամիտ է: Այս փոփոխութեամբ թիւրքիս քաղաքականութիւնն ալ չը փոխուի, վասն զի քաղաքականութեան ղեկը Նըսիտին է: Հայոց համար ալ իրաց վիճակին փոխուելու առ այժմ չենք սպասել. թիւրքնոր նախարարը Սուլթանին միտքը այնքան չը պղտորէ որչափ Սաիդ: Սեյի համար փափագել էր ձեւփոխել բաշա, արդարութեան նախարարը գործէ ձեւանալու: Այդ անձն թիւրքերու ջնքմ բարեկամ ու պաշտպան, որոց հորինել հարստացած է, և միանգամայն Միտիդ չկաթողիլոսին մեղսակիցն ու խորհրդակիցն, հայ ազգին անհաշտ թշնամին է: Պատրիարքարանը այս անձին իրաւասութեան ներքեւն է: Բարեկարգութեանց յանձնաժողովը իր նիստերը կը շարունակէ, սակայն իր խորհուրդներն ի գործ դնելու համար դրամի պէտք ունի և դանձը դնալով է: Փոխառութեան մը պէտքը զգալի է, պիտի կարենան:

Հակակ

ՆԱՍՏԱԿ ԹԻՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 21 ապրիլի

Այստեղ երեսուն տարի առաջ ամբարշտական դաս մը կար, որ պատրիարքի չուրջը բոլորած կը կատարէր ամեն ազգային գործերը: Այս անձինքը կը կազմէին ընդհանրապէս բաշայնութեան սեղանատններէն, և ազգայնական պաշտօն ծառայողներէն: Այս կառմի պատկանող մարդիկ եթէ այժմեան հայ աշխարհաւարներուն կը թուի ինչ և ճարտարութիւնը չունենէ, դո՛ւն զիստ ալ չէին հասցնուէր: Գիտութեամբ ազգային յառաջդիրութեան, և իրենց իշխանաւորութեան փառասիրութիւնը յաղեցուցած ատենին նախնական գործողութիւններ ալ կընէին ազգին առատօրէն: Եղան նաև անոնց մէջ այնպիսիներ, որք ազգային գործոց մէջ միջամտելուն պատճառաւ կորուսին իրենց դիրքն և հարստութիւնը և երբեմն իսկ իրենց արտօնքը, իրենց վեհաքովրդաւորութեան ապրաքստ ազգի մը մատուցած ծառայութիւններն:

Հասաւ այժմեան սերունդը, քիչ մը անջնայ:

աւելի զարգացած, բայց միշտ ի նորոս ամբարշտից հիմնած զարգացողներն, և ասոնց առաջին դործն եղաւ նմանցնել յանկարծ մեր վարչական կազմակերպութիւնը եւրոպական ազգաց վարչական կազմակերպութեան: Լուի Բլան և Պրուզոն կարգաւորողներ արդէն սկսեցին գոյանալ: Եւ որպէս զի կապիւթիւնը կատարեալ ըլլայ, նախ տապալեցին հայ ազնուականութիւնը, այն է ամբարշտական դասը, որ արդէն ինքնին տապալուած էր, երբ 1854-ի Արեւելեան պատերազմէն վերջը փոխեցաւ հիմնովին թիւրքիս ֆինանսական հիմնարկները: Խմբագրեցին Ազգային Սահմանադրութիւն անուամբ կանոնադրութիւն մը, իրը ազգային անխնայ ամեն անոնք, որ այն ժամանակ կը ներկայացնէին զայն իրը տարածամ, անգործարարի և աղաքիւս մի գործ:

Բնաւ երկու տարի դառն փորձառութիւնէ ետեւ հազիւ սկսանք իմանալ թէ այդ ընդդիմադիրներն որքան հեռուտեա, լրջամիտ են եղել, որքան լաւ կը ճանաչէին եղբւր ազգն և իւր դառնած միջավայրին անյարմարութիւնը: Թիւրք կառավարութեան բարձր պաշտօնէից մէջ հակառակորդներ զտեսուցան այն ժամանակ, որք միասնութեամբ կը կարծէին թէ հայը այս կերպ կազմակերպուելով, պիտի տիրապետէր բարեկապէս ամբողջ երկրին: Բայց Ազգի բաշան, որ ամենէն լաւ կը ճանաչէր հայերը չիտլ տուէր, ըսաւ, որ ասիկ ետքը անտի զբաղին. հեռութեան ինձորը հայերը իրենք գտան, և վաւերացուց փոփոխ ասանաւարարութիւնը կայսերական փառաւոր հրովարտաւորով մը: Ասիկ բաշան յիմար մէկը չէ եղբւր:

Գուր որ բնականապէս սովորած էր ամեն եղբւրսկեան վրայ եւրոպական աշուր նայիլ՝ անտաւարկայ ժամանակ մը երանի կը կարգաւորէ մեզի, մեծամեծ յոյսեր կը ստուգանէր ձեր մտքին մէջ մեր ապագային նկատմամբ, երբ վերադառնալով իրեն և սուտ լեզուներ կը պատմէին ձեզ թէ ինչպէս հակադրուել կը յառաջանային այն փրկարար տեսարանին առաջնորդութեամբ որ ազատամիտ և յառաջդիրութեան տեսլութիւն մը շնորհած էր հայ ազգին: Երբ մեր գիւտական արարողութեանց նկարագրութիւնը կընէին ձեզ, երբ կը ծանուցանէին թէ քիչ ժամանակամիջոցի մէջ որքան Պաշտօններ, Կաթողիկոս և Գաւթնատաներ երեսն եկած էին մեր մէջ, որք բնակը գործացնելով կը հիացնէին զաշխարհ:

Բուսարանակ հայն յախմայն յախմայնուած բոլոր այս թատրոնական երեւոյթներէն, Տաշկա-Հայաստանի փրկութեան յոյս մեծ մասամբ Պոլսոյ հայուն վրայ դրած էր բնականապէս և բոլոր իր ուշադրութիւնը դարձուցած էր Կ. Պոլսոյ վրայ: Ձեր աչքի բոլոր ինկաւ այս վերջի երկու տարիներու մէջ և այս լաւ եղաւ: Անոնք որ նպատակէին ձեզ իսկութիւնը տեսնելու, անհուն ծառայութիւն մատուցին Հայաստանի հայուն:

Պոլսը ձեզ Հայաստանը մոտացնել տուեր էր: Գուր Պոլսին շատ քան յառաջով, կը կարծէիք թէ մեզ հետ համեմատութիւնը դրացնելով միայն, կարելի էր դարձան տանել Հայաստանի աղէտը: Երբեք, և կարող եմք ըսել իսկ, որ Պոլսի վրայ միայն ձեր ուշադրութիւնը դարձուած ըլլալով գրեթէ անտես ըրել էիք բուն իսկ թիւրքաց Հայաստանը, ձեր սահմանակից երկրներ: Կը կարծէիք մինչև հիմա որ թիւրքերեան հայ ընկալով պէտք է իմանալ Պոլսոյ մէջ գտնուող խուճիկ մը ինքնահաւան իմաստակ, կաշառակեր, թրքաբաղայ արաբաճներ, որք յաջողեցան անդին ժամանակ մը կորսնցնել տալ և հասուցին մեզ վերջապէս այնպիսի վիճակի մը, որ ամեն մարդ սկսեաւ այժմ փնտռել նախկին ամբարշտական դրութիւնը իր ամեն զեղծումներով միայն: Բայց այդ զեղծումներու փոխարէն գտնէ մարդիկ, իրենց սոցիալութեան չի նայելով՝ անբաւ գումարներ կը վառնէին ազգային ամեն հատաւորութեանց պաշտօնութեան համար, աղքատութիւն ունէին ինքնակալին և նախարարութեան մօտ, մինչդեռ այժմեան գործողներուն խիստ մեծագոյն մասը, զարձեւալ առաջիններուն չափ բռնաւոր, կամ իրենց անձնական անխոտաւորութեան շահերուն գործիք են ըրած զազգին և կամ աղքատին հացը զոգոյնաւոր վրայ են: Ամբարշտներ, դո՛ւն նախնայէ՛ք զորոքած կոնտրոլ կրնէին իրարու վրայ և կը յարգէին պատրիարքական իշխանութիւնը: Այժմեան գործիչները, որովհետեւ ընտրուած են իր թէ ազգին կողմէն, անոնց որ և է պատասխանատուութեան, անտանձ կը գործեն և յետին սրբիման աւելի չի պատուեր ընտրուած պատրիարք մը, որքան կը մեծարէ ձեռնարկութեան եկած իր զբաղ տեղերը:

Իրաց այդ վիճակին մէջ անխիղճութիւն, մեղսակցութիւն է նկարագրելու ուստիարանակ հայուն: Պոլսի հայ գործիչները բոլորովին հակառակ և տարբեր գոյներով: Անոնք որ կամբաստանեն զմեզ իր թէ մասնաւոր հակում մը ունենայինք աղաքակ Կ. Պոլսի հայն ուստիարանակ հայուն առաջ՝ անոնք են բուն աղքատ իր բնական ճանապարհէն մարդեցնողը: Թողու, անտես առնել բուն իսկ հայրենիքը և դրադեցնել տալ ձեզ հեռաւոր երկրի մը մէջ հաստատուած աշխատեալ զաղթականութեան մը հետ, այս է անոնց նպատակը: Մենք պէտք չէ որ ձեզ հետ վարկիքը ինչպէս կը վարկիքը օտարի առաջ, այն է ստույթեան և առաքելութիւն կեդրեով: Սիստեմատիկ պարսաւանքին կը խորշնէք մենք և մեր սնափառութիւնը աւելի կը շողջարթութիւն երբ կարողանանք ներկայացնել ձեզ մեր բնական քաղաք իր կենտրոն հայու ամենաաղիւ մէջ մասին: Բայց այդ է էութիւնը և էութեան առաջ ոչ ոք իրաւունք ունի աչք խփելու:

Մենք լաւ համոզուած ենք որ եթէ ուստիարանակ հայն այժմ աւելի կը մտածէ Տաշկա-Հայաստանի վրայ, պատճառն այն է որ հիմա քիչ մը աւելի լաւ հասկացաւ թէ ինչ է իրարի: Պոլսոյ հայ զաղթականութեան արժողութիւնը: Այս պատճառաւ է նաև որ Ռուսիոյ ամեն հայաբնակ քաղաքներն, սկսելով Պոլսից յուսանալով իր ազգային բնակչութիւններն կը հաստատեն այժմ, որք մեր բնակչութիւններէն հազարապատիկ աւելի օգուտ կը խոստանան բերել թէ տեղական յառաջդիրութեան համար և թէ Հայաստանի մոտաւորական զարգացմանը մասին: Ձեր գոհողութիւններն, ձեր ջանքերն նուազ ապագային կըլլան անշուշտ եթէ ուղղակի ձեռք կտրեալք Հայաստանի հայուն, առանց Կ. Պոլսի միջնորդութեան: Մայրաքաղաքին հայը այս տարի մասնաւորացից տուաւ թէ որքան անընդունակ է բացարձակ տանձնելու դատաւարի հայը ղեկավարելու հողը, թէ անտի ամեն հայրենասիրական բացառանշտութիւններն ստույթիւն են, ամեն շարժումներն ծիծաղալար զանաւորութիւն և թէ որ աստիճան ազգային տեսակէտով անբարոյականութեան, անզգայութեան մէջ ընկղմած է նա:

Ղեկավարող ձեռքը պէտք չէ որ փռած ըլլայ: Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

— Պատերազմական ծախսի առիթով «France» լրագրի Կ. Պոլսի թղթակցը հաղորդում է, որ իր թէ Ռուսաստանը, եթէ պատերազմական ծախսի առիթով իր և Բ. Գրան մէջ եղած բաւականութիւնները անբաւարար հետեանք կունենան, վերջի վերջոյ կը դրաւի ինքզինքը և կը պահի նրան մինչև որ վերջնականապէս կը լուծվին իր և Բ. Գրան մէջ եղած բոլոր խնդիրները:

— «Presse» լրագրի Կ. Պոլսի թղթակցի խօսքերով, Նովիկով դեսպանը այն պատճառով չի վերադառնալ և չի վարի իր նախկին պաշտօնը, որովհետեւ Կ. Պոլսում ուստաց դեսպանութիւնը կը վերցվի և կը փոխարինվի սովորական դեսպանութեան (միստայայով):

— «C. Neper. Beldomosti» լրագրին Սօֆիայից հաղորդում են, որ պինդարական միջնորդը գնեւրալ Կրիտիկ հրաժարականը այնտեղ մեծ ապաւորութիւն դրոնց հաւարակութեան վրա: Խօսուում էր, որ ուստաց օֆիցերներն մի ամբողջ խումբ նոյնպէս կամենում էր հրաժարական տալ, բայց այդ գործը դադարեց: Ազատամիտներն ազգի տաղան շարունակում է անել: Մինչև անգամ զանազան կողմերից լուրեր են տարածվում, որ եթէ իշխան Աւթուանդը չը կամենայ վերադառնալ, այն ժամանակ բողբաններ կընտրեն իրանց վրա իշխող կամ գնեւրալ խմբաւորվին, կամ իշխան Գոնդուկով-Կորապիովին, կամ Ակապիովին, կամ իշխան Խմբաւորակուն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 ապրիլի: Հրէաների ներկայացուցիչները ապրիլի 27-ի ընդհանուր ժողովի ժամանակ որոշեցին, յայտնել կառավարական բոլոր անձանց, որ նրանք Աստուծոյ և Ռուսաստանի առաջ վիայում են, թէ չը կան ոչ մի տեսակ առանձին ըսկզբունքներ և հիմնարկութիւններ, որոնք հրէաներին առանձին զաղանի կազմակերպութիւն տային, որ դա կեղծ դոկտրինաների վրա հիմնված բամբասանք է հաւատարմութեան կողմից: Ապրիլի 27-ին մի-նիստերի խորհուրդը հաստատեց Սիբիրի երկաթուղու գիծը Սամարա-Ուֆայի վրա: Կազան-Եկատերինբուրգի ուղղութեան մասին լուրը սխալ է: Լուր է տարածված, որ կրակի դէմ ապահովող ընկերութիւնները հրաժարվում են անկարգութիւնների և քաղաքական խռովութիւնների ժամանակ պատանակելու:

պոլիսն տային, որ դա կեղծ դոկտրինաների վրա հիմնված բամբասանք է հաւատարմութեան կողմից: Ապրիլի 27-ին մի-նիստերի խորհուրդը հաստատեց Սիբիրի երկաթուղու գիծը Սամարա-Ուֆայի վրա: Կազան-Եկատերինբուրգի ուղղութեան մասին լուրը սխալ է: Լուր է տարածված, որ կրակի դէմ ապահովող ընկերութիւնները հրաժարվում են անկարգութիւնների և քաղաքական խռովութիւնների ժամանակ պատանակելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մայիսի: «Голосъ» լրագրից հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի դուստն իր հովանաւորութեան տակ ընդունեց կանանց բժշկական կուրսերը:

10հոկտեմբեր, 1 մայիսի: Կրկնապիկ մէջ մշտնջնվում են արտաքոյ կարգի նոր օրէնքներ. Կառավարչական դատարանները լինելու են առանց երդվեալ դատաւորների: Պոլիցիան իրաւունք է ստանում պատուովութիւնների առաջն առնելու և նրանց յայտնելու համար կաշնաւորել, խուզարկութիւններ անել, արտաքոյ օտարականներին: Փոխարքային իրաւունք է տրվում արդելել ժողովները, ընկերութիւնները, զաղարեցնել հրատարակութիւնները: Նոր օրէնքների ժամանակաւ միջոցը երեք տարի է:

ԿԱՅԻՐԷ, 1 մայիսի: Եգիպտական միւնիստրների նախագծի համեմատ եգիպտական անուանիների ժողովը պէտք է վճիռ կայացնէ ինքիվին դահլիճի անելու և նրա տեղ Տեպիկի-վաշայի ութ տարեկան որդի Աբբասին եգիպտական դահլիճ բարձրացնելու մասին: Հոգաբարձութիւնը պէտք է պատկանի միւնիստր-նախագահին, երեւալի կըրթութիւնը կը յանձնվի Արաբի-վաշային:

ԼԻՍՏԵՐԻԿ, 30 ապրիլի: Տեղական դատարանը լուր ստացաւ, որ նա Ֆեհիաներից մահուան է դատապարտված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մայիսի: «Новости» լրագրից հաղորդում է, գնեւրալ Սօֆիայի մի նախագիծ մշակեց, որ առաջարկում է Սե ծովի արեւելեան ափը բնակեցնել արեւելացիներով և առհասարակ տեղացիներով, որովհետեւ ուստները չեն կարողանում ընտելանալ այնտեղի օդին: «Голосъ» լրագրից հաղորդում է, Գրոտ իր խնդիրը համեմատ արձակվում է բանտերի կառավարչի պաշտօնից: Մինչև Գալիկի վերադառնալը բանտերը կը կառավարէ մի-նիստի օգնական Գուրնով: «Новое Время» լրագրից հաղորդում է, երկ կայսերական ընտանիքը Գաշինից Պետերգոֆ տեղափոխվեցաւ: Ճանապարհների հաղորդակցութեան միւնիստրութեան մէջ մայիսի 7-ին երկաթուղիների վրա ծառայողների ժողով է նշանակված նրանց թոշակների գանձարանի նախագիծը վերաքննելու համար, որովհետեւ նրանցից շատերը անբաւականութիւն էին յայտնել կառավարչական նախագծի դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսակիր առաջին շրջանի արժէ 93 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 75 կ., երրորդ 90 ռ. 87 1/2 կ., չորրորդ 90 ռ. 62 1/2 կ., հինգերորդ 90 ռ. 62 կ., ներքին 5% տոմս 217 ռ. 75 1/2 կ., երկրորդ 211 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակիր արժէ 90 ռ. 50 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 4 կ.: Ռուսաց 1 ռ. Ամստերդամի վրա արժէ 123,75 պէսա, ուստաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208 մարկ 87 պֆ., Գաշինի վրա արժէ 257 ֆրանկ 25 սանտիմ: Բոլսայի արժամատիւնը հանգարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

